

ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՋԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ¹

Հին հայ մատենագիրների մեծ մասը քննադատվում է՝ այսպես կոչված «ոացիոնալիստական» աղբյուրադիտության կողմից: Այս «օբեկտիվ» քննադատները, ինչպես հայտնի է, փորձում են տեղից շարժել և՛ Շղիշին, և՛ Քորենացուն, և՛ Փափստոսին և զրեթե մեր բոլոր հին հայ մատենագիրներին: Շատ ու քիչ հաստատուն էր համարվում Անանիա Շիրակացին, բայց նրա մատենագրության մեջ մտած տեքստերի մեծ մասի հարազատության մասին էլ վերջերս կասկածանքով հանգես է եկել աստղագիտ պրոֆ. Լ. Սեմյոնովի իր մի գրախոսականում, որը տպագրվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի «Տեղեկագրի» (հասարակական գիտություններ) 1947 թվի № 3-ում: Մենք չէինք ցանկանա խոսեւպրոֆ. Լ. Սեմյոնովի առաջադրած հարցերի մասին, որովհետև դրանք նեղ աղբյուրագիտական հարցեր են, և հավատացած ենք, որ պրոֆ. Լ. Սեմյոնովը հավանում է թյունի ձեռագրագետ-աղբյուրագետի դերում հանգես զալու, բայց քանի որ պրոֆ. Լ. Սեմյոնովը աղբյուրագիտական մի շարք հարցեր քննում է տոմարական հաշիվների հիման վրա, ուստի և մենք պատշաճ համարեցինք անգրադատնալ նրա քննած հարցերին:

Պրոֆ. Լ. Սեմյոնովի գրախոսականում առաջադրված հարցերը մենք բաժանում ենք երկու խմբի—հարցեր, որոնք նա ճիշտ չի ըմբռնել, ուստի և աննպատակ է եղել նրա քննադատությունը, և հարցեր, որոնք ըմբռնել է, բայց նրանց քննության հիման վրա հանած եզրակացությունները համազիչ և ընդունելի չեն: Փորձենք նրա առաջ քաշած հարցերը քննել այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ նա դրել է:

Պրոֆ. Լ. Սեմյոնովի առաջին և հիմնական առարկությունը Շիրակացու մատենագրության մեջ հրատարակված «ՇԼԲ»-ի դեմ է: 532 տարիների աղյուսակի հիմքը, ինչպես ասել ենք մենք մեր «Շիրակացու մատենագրության» մեջ, Հայկ. ՍՍՌ Մատենադարանի 971 թվին ընդօրինակած պատառիկն է հանգիսացել, որը և մենք լրացրել ենք այլ ընդօրինակությունների հիման վրա և տոմարական մանրակրկիտ հաշիվներով աշխատել վերականգնել ամրողջ «ՇԼԲ»-ի տեքստը, «ՇԼԲ»-ն Շիրակացուն պատկանելու մասին մենք բերել ենք մի շարք կովաններ, առաջին հերթին՝ հենց իրեն Շիրակացու խոսքերը. «...կազմեցի ես Անանիա որդի Յովհաննիսի Շիրակայեոյ և գրոշմեցի առանձինն զրանն մի մի ամ ՇԼԲ...» (էջ 105), բերել ենք նաև Կոզեռնի տեղեկությունը «ՇԼԲ»-ի մասին (էջ 109), «ՇԼԲ»-ն Շիրակացու աշխատությունների շարքում 971 թ. ձեռագրում ընդօրինակելու փուստը և այլն:

Պրոֆ. Սեմյոնովը փոխանակ ըստ էության քննելու աղբյուրագիտա-

¹ Տպվում է մաքերի փոխանակության կազմով: Խմբ.

կան մեր կռիվները և ընդունելու կամ մերժելու, դիմում է տոմարական այնպիսի հաշիվներին, որոնք ոչ մի նշանակություն ունենալ չեն կարող «ՇԼԻՆ»-ի հեղինակը պարզելու հարցում: Այսպես, ինչ նշանակություն ունի այն փաստը, թե «ՇԼԻՆ»-ի սկիզբը 552 թվականից է, այսինքն Շիրակացուց մի դար առաջ: Դրանից պարզ երևում է միայն, որ Շիրակացին իր «ՇԼԻՆ»-ն կազմել է էսսի պարաստի «ՇԼԻՆ»-ի հիման վրա, որը սկսվում էր 553 թ.: Ինչ կա, դրա մեջ կասկածելի: Մեր կարծիքով, Աղեքսանդրյան պատրաստի սխեմայից չօգտվելը կասկածելի կլիներ և ոչ հակառակը: Ըստ երևույթին պարզ. Սեմյոնովը ծանոթ չէ Շիրակացու իրեն վկայությանը՝ Աղեքսանդրյան սխեման հիմք վերցնելու մասին. «Հինդ հարբւր երեսուն և երկու ամաց» աղյուսակը,—ասում է Շիրակացին,—կազմեցի ըստ թուոց աղեքսանդրացուն» (էջ 105):

Պրոֆ. Սեմյոնովը սխալ է հասկանում նաև մեր մատենագիտների տեղեկությունները Շիրակացու կողմից հայկական տոմարն անշարժ դարձնելու փաստի մասին: Նրա համոզմամբ, տոմարն անշարժ դարձնելու միակ միջոցը նահանջ տարիների համար մի օր ավելացնելն էր «ավելյաց» կոչվող ամսի վրա: Բայց տոմարի պատմության մեջ հայտնի է տոմարն անշարժ դարձնելու մի ուրիշ միջոց—տարեկան նահանջի միջոցը, երբ նահանջի օրերը հավաքվում են մի տարվա մեջ և նահանջ տարին դուրս է նետվում: Շիրակացու «ՇԼԻՆ»-ի տեքստը հիմք է տալիս հնթադրելու, որ այդպիսի ձևի անշարժ տոմարներից է եղել Շիրակացու տոմարը: «ՇԼԻՆ»-ի տեքստը հայտնի դառնալուց հետո մենք ոչ թե պատրաստի սխեմաների հիման վրա կասկածանքի աակ պիտի առնենք այն, այլ կոնկրետ այդ նյութի հիման վրա պիտի վերանայենք Որմանյանի և այլոց տրադիցիոն ու հնացած տոմարական կարծիքները և հաշիվները:

Պրոֆ. Լ. Սեմյոնովը մեղ մեղադրում և քննադատում է այն բանում, որ իբր թե մենք մեր աշխատության մեջ «Տոմարի պատճենները» և ամսացանկերը վերագրել ենք Շիրակացուն. «Իսկ (այսինքն «Տոմարի պատճենները» — Ա. Ա.) 12-րդ դարից ոչ վաղ դրված մի աշխատանք է,—դրում է նա,—հայկական նավասարդ ամիսը համընկնում է հռոմեական օգոստոս ամսվա հետ և տրված են «ամիսը արաբացւոց» և «ամիսը տաճկաց», որոնց մասին Ա. Շիրակացին դադափար ունենալ չէր կարող» (էջ 99): Պրոֆ. Լ. Սեմյոնովի առարկություններն անտեղի են, որովհետև մենք ևս մեր աշխատության մեջ «ամիսը արաբացւոց» և մի քանի այլ ամսացանկեր Շիրակացունը չենք համարել: Ահա այդ առթիվ մեր հղրակացությունը. «Այս ամիսների անուններից որոշ ցանկեր, հատկապես արաբականը, մեր կարծիքով, մտցված է տեքստի մեջ հետագայում» (էջ 122): Այդ նկատառումով էլ նշված աշխատությունները Շիրակացու տեքստերի մեջ չեն մտցվել: Կարող է այդ նորից ստուգել պրոֆ. Սեմյոնովը: Մեզ զարմացնում է պրոֆ. Սեմյոնովի կրքոտ քննադատությունը—միթե կարելի է

1 Ի միջի այլոց, պրոֆ. Սեմյոնովը սխալվում է իր գրախոսությունում՝ կարծելով, թե անցյալում միայն 200 և 532 տարիների աղյուսակներ են գոյություն ունեցել: Իրապես, այդ հաշիվներն ավելի բարդ են—գոյություն են ունեցել 16 տարիների, 95 տարիների և այլ աղյուսակներ, որոնց մասին մեզ որոշ տեղեկություններ հայտնի են մեր ձեռագրերից, և մենք, ինչպես միշտ, այնպես և այժմ, պատրաստ ենք այդ նյութերը տրամադրելու տոմարով հետաքրքրվող մեր մասնագետներին:

գրախոսել մի աշխատություն և ծանր մեղադրանքներ բարդել հրատարակողի վրա, առանց անգամ ստուգելու, թե տվյալ աշխատությունը մտել է Շիրակացու տեքստի մեջ, թե ոչ:

Պրոֆ. Լ. Սեմյոնովը մեզ մեղադրում է և քննադատում այն բանում, որ իբր թե մենք ուսումնասիրության մասում բանասիրական նպատակով բերած ժամացուցակ-ստվերաչափերը համարել ենք Շիրակացու գործը: Պրոֆ. Լ. Սեմյոնովը դարձյալ թյուրիմացության մեջ է. իրապես, ստվերաչափը մենք Շիրակացունը չենք համարել, և անտեղի են նրա բերած տոմարական հաշիվները: Ահա ստվերաչափի մասին արտահայտած մեր կարծիքը. «Շիրակացու տված ստվերաչափության այս սկզբունքի հիման վրա նրա տոմարի մեկնիչները կազմել են առանձին ժամացուցակ-աղյուսակներ» (էջ 123), կամ՝ «Երկու ժամանակներն էլ (խոսքը ստվերաչափի մասին է. — Ա. Ա.) տոմարի մեկնության հատվածներ են հանդիսանում» (էջ 123—125):

Պրոֆ. Լ. Սեմյոնովը մեզ մեղադրում է այն բանում, որ իբր թե մենք մեր աշխատության մեջ կրկնել ենք պրոֆ. Բ. Պատկանյանի «Անանիայի Շիրակունեոյ մնացորդք բանից» աշխատության մեջ հրատարակված Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» տեքստը և ներկայացրել որպես նոր հայտնաբերած. «Իր նոր աշխատության մեջ, — գրում է նա, — ընկ. Ա. Արրահամյանը նորից կրկնում է Պատկանյանի տեքստը որպես նոր հայտնաբերած» (էջ 99): Իրապես, մենք Շիրակացու այդ տեքստը չենք հրատարակել և պրոֆ. Պատկանյանին կրկնել չէինք կարող: Դուցե պրոֆ. Սեմյոնովը «Տիեզերագիտություն և տոմար» աշխատությունը չփոթում է «Յաղագս կենդանատեսակաց» աշխատության հետ, որը հրատարակված է նաև պրոֆ. Պատկանյանի մոտ: Բայց այս տեքստի նկատմամբ ևս մենք չենք մեղանշել գիտության դեմ և պարզ ասել ենք. «Շիրակացու «Յաղագս կենդանատեսակաց» աշխատությունը հրատարակել է պրոֆ. Բ. Պատկանյանը իր կազմած «Մնացորդք բանից Անանիայի Շիրակունեոյ» ժողովածուում: Սակայն պրոֆ. Բ. Պատկանյանի հրատարակած տեքստը վերջից թերի է և ունի գրչական բազմաթիվ սխալներ, որոնք դժվար ընթերցելի են դարձնում Շիրակացու այդ կարևոր աշխատությունը: ՀՍՍՌ Մատենադ. Ն. № 1973 և 1267 ձեռագրերում մեզ հայտնի դարձավ Շիրակացու այդ աշխատության լրիվ տեքստը, որը և մենք բերում ենք ստորև» (էջ 323):

Պրոֆ. Սեմյոնովը պահանջում է, որ մենք լրացնեինք և քննադատաբար ուղղեինք պրոֆ. Պատկանյանի տեքստը և այն ձևով հրատարակեինք. «Բայց լավ չէ՞ր լինի արդյոք քննադատական կերպով ուղղել և լրացնել պրոֆ. Պատկանյանի տեքստը, քանի որ դեռ ստուգված չէ, թե ով է ավելի իշտ կարդացել տեքստը՝ ընկ. Ա. Արրահամյանը, թե պրոֆ. Բ. Պատկանյանը» (էջ 99): Անհասկանալի և հակասական են պրոֆ. Սեմյոնովի պահանջները: Եթե նա «Յաղագս կենդանատեսակաց» աշխատությունը Շիրակացունը չի համարում, էլ ինչու է պահանջում մեզանից, որ մենք Պատկանյանի հրատարակած ընդօրինակությունը հրատարակեինք, իսկ եթե նրա առարկությունը հրատարակության ձևի դեմ է, ինչու է այն դեպքում կասկածանք հայտնում տվյալ աշխատության հեղինակի մասին: Բայց Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության հրատարակության առթիվ պրոֆ. Լ. Սեմյոնովը իր 1940 թվի «Коммунист» թեր-

Թույլ զրած գրախոսականում մեր հրատարակած տեքստի և պրոֆ. Բ. Պատկանյանի տեքստի հարաբերության մասին միանգամայն այլ կարծիք է հայտնել: Ցույց տալու համար, թե որքան փոփոխական է իր կարծիքների մեջ պրոֆ. Սեմյոնովը, մենք անհրաժեշտ ենք համարում բերել նրա նախկին կարծիքը. «Исследователю текста Ширикаци, научному сотруднику Матенадарана тов. Абрамяну пришлось сличить тексты многих рукописей и на основании их детальнейших исследований и сравнений подготовить к печати наименее вероятнейший текст „Космографии и науки о календаре“ Ширикаци» («Коммунист», 1941 թ. հունիսի 15): Մենք կուզեինք հարցնել պրոֆ. Սեմյոնովից—իր արտահայտած միանգամայն հակադիր կարծիքներից ո՞րն է ճիշտը—առաջինը, թե՛ երկրորդը:

Պրոֆ. Սեմյոնովը մեզ մեղադրում է այն բանում, որ իբր թե մենք մեր ուսումնասիրության մեջ Շիրակացուն ենք վերագրել «Վասն օղից արեգական» տոմարական տեքստը (էջ 100) և դա համեմատության մեջ դնելով Շիրակացու «Տիեզերագիտության» հետ, քննադատում է մեզ, որ առաջինը Շիրակացուն լինել չի կարող, որովհետև սնոտիապաշտական է: Իրապես, այդ տեքստը Շիրակացուն պատկանելու մասին մենք ես կասկածել ենք: «Հատվածի սկզբում տրված մի ակնարկից երևում է,—գրել ենք մենք,—որ այդ ամբողջ հատվածը, եթե միայն Շիրակացուն է, վերցրած պիտի լինի Անդրեստից» (էջ 114): Այդ տեքստից մենք բերել ենք միայն մի փոքրիկ հատված, բանասիրական նպատակով, ուսումնասիրության մասում: Այդ տեքստը ես չի մտել Շիրակացու բնագրի մեջ, որ նորից կարող է ստուգել պրոֆ. Լ. Սեմյոնովը:

Պրոֆ. Սեմյոնովը մեզ մեղադրում է, որ մենք Շիրակացուն ենք համարել համաստեղությունների մասին եղած հատվածները, որոնցից երկուսը համեմատության մեջ դնելով Շիրակացու «Տիեզերագիտության» հետ, անհարադատ է համարում մերը և հարազատ՝ պրոֆ. Պատկանյանին: Իրապես, նշված հատվածները կան նաև պրոֆ. Պատկանյանի «Մնացորդ բանից»-ում, և պրոֆ. Սեմյոնովը թյուրիմացության մեջ է (տես Պատկանյանի «Անանիայի Շիրակունեոյ Մնացորդ բանից», էջ 73—74): Մարող է պատահել՝ նշված հատվածները ընդմիջարկություն լինեն. բայց աղբյուրագետը թիրախունք չունի իր ցանկության համաձայն փոփոխել տեքստերը:

Ձեռք ուզում կանգ առնել Սեմյոնովի գրախոսականում զրարար բնագրից մեր ընթացիկ ցիտատների աղճատումների վրա (էջ 100-ի մի ցիտատում միայն՝ «յոր և իցէ՞՝ փոխանակ թի հարաւոյ կողմանն», «տեսանեսա՞՝ փոխանակ «տեսանիս», «գրեզ՞՝ փոխ. «գրեւ», «գի խաղաղութեան» փոխ. «գի ի խաղաղութեան», «գիսավոր» փոխ. «գիսաւոր» և այլն¹) և աղբյուրագիտական աննպատակ համեմատությունների վրա, որովհետև, ինչպես վերևում ասացինք, պրոֆ. Սեմյոնովը աղբյուրագետ չէ և դժվար է նրան մեկնել վերականգնվել աղբյուրագիտության մեջ:

Մեզ մնում է միայն ցավել, որ պրոֆ. Լ. Սեմյոնովը Շիրակացու

¹ «Վ» փոխ. «ւ», «ե» փոխ. «ի» և «ի» նախդրի բաց թողնելը տեղի է ունեցել սրբագրելի մեղքով: Խմբ.

մեր հրատարակած 25 տեքստերից խոսելով միայն երկուսի մասին և այն էլ առանց հիմքի, առանց փաստեր բերելու, փորձում է շատ թեթև ձեռքով սավեր ձգել Շիրակացու տեքստերի մեծ մասի հարադատության վրա: Գրախոսողը պարտավոր է բարեխիղճ լինել:

Պրոֆ. Ա. ԱՐԲԱՆՄԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Անանիա Շիրակացու մատենագրությունը» գրախոսող պրոֆ. Լ. Սևմյոնովի ղիտողությունների մի մասը պրոֆ. Ա. Արախանյանի պատասխանով ըստ էության չի հերքվում: Այդպիսի հարցերից պետք է համարել:

ա) Հայոց թվականության հիմնադրման և 532-րդ շրջանի առաջին ցուցակը կազմելու հեղինակությունը Շիրակացուն վերագրելը, որը հիմնավորված չէ:

բ) Շիրակացին ըստ մատենագրական տվյալների կազմել է անշարժ տոմար, մինչդեռ «Անանիա Շիրակացու մատենագրության» մեջ գետնիցված է շարժական տոմարի աղյուսակ, ուստի երա՛ Շիրակացուն պատկանելի վիճակի է:

գ) Սևոտիապաշտությունը խստորեն բնագատող Շիրակացուն սևոտիապաշտական տեխտերը անվերապահորեն վերագրելը անհիմն է և նսեմացնում է Շիրակացու ստեղծագործության նշանակությունը:

Պրոֆ. Ա. Արախանյանի աղբյուրագիտական արժեքավոր, բայց ոչ անհրաժեշտելի «Անանիա Շիրակացու մատենագրությունը» հրատարակվելուց հետո ժամանակ է. որպեսզի Շիրակացու աշխատությունները բնագրվեն նաև ըստ բովանդակության և ըստ պարբերականի, որով կորոշվի Շիրակացու տեղն ու նշանակությունը գիտության պատմության մեջ և միաժամանակ լուծում կստանան Շիրակացուն վերաբերող մի շարք աղբյուրագիտական հարցեր, որոնք սպառված համարել չի կարելի:

Տպագրելով պրոֆ. Լ. Սևմյոնովի գրախոսական և պրոֆ. Ա. Արախանյանի պատասխանը, խմբագրությունը հրավիրում է գիտնականներին իրենց խոսքն ասելու Շիրակացու և նրա մատենագրության վերաբերյալ: